«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՐՎԵԼԸ» ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՕՂԱԿԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՊԻԼՈՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Մարգարյան Ա.Գ.

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ընտանեկան բժշկության ամբիոն, Երևան, Հայաստան

«Մասնագիտական այրվելը» (ՄԱ) տերմին է, որը բնութագրում է երկարատև հուզական և մտավոր հյուծումը, ֆիզիկական հոգնածությունն ու աշխատանքի կատարման բավարարվածության իջեցումը: Աշխատանքի հետ կապված, մասնագիտական այրվելը բնորոշվում է որպես մասնագիատական ռիսկի գործոն տարբեր մասնագիտությունների համար, որտեղ գերակշռում է մարդկանց օգնություն ցուցաբերելը: Այդ վիճակը հաճախ հանդիպում է բուժաշխատողների, մանկավարժների, բուժքույրերի և սոցիալական աշխատողների շրջանում:

Տվյալ հետազոտության նպատակն է որոշել ՄԱ տարածվածությունը առողջապահության առաջնային օղակի շրջանում: ՄԱ չափման համար կատարվել է հարցում: Հետազոտման քարտը ներառել է դեմոգրաֆիկ մանրամասնություններ և Maslach Burnout Inventory (MBI) մեթոդը, որը համարվում է ՄԱ-ի չափման ստանդարտ եղանակ: MBI յուրաքանչյուր ենթասանդղակի արդյուքները դիտարկվել են առանձին:

Հարցումը անց է կացվել 240 բժիշկների շրջանում: Հարցերին պատասխանել են 184 բժիշկ (մասնակցության տոկոսը կազմել է 76,7%), մշակմանը ենթարկվել են 134 քարտ: Հարցմանը հիմնականում մասնակցել են կանայք (89,6 %), միջին տարիքը կազմել է 48,9 տարի: 36,6 % բժիշկ ունեին նեղ մասնագիտացում, 34,4 % առաջնային օղակի բժիշկներ էին, 18,7 % մանկաբույժներ, 10,4 % թերապևտներ և աշխատում էին գյուղական վայրում:

Հարցմանը մասնակցած 32,8% բժիշկ ունեին հուզական հյուծման (ՀՀ) բարձր արժեքներ, 49,3% ունեին դեպերսոնալիզացիայի (ԴՊ) բարձր արժեքներ, 48,5 % ունեին մասնագիտական արդյունավետության ցածր արժեքներ: Հարցմանը մասնակցած բժիշկների 16,4 % ունեին ՄԱ երեք ենթասանդղակների բարձր ցուցանիշ: ՀՀ ենթասանդղակի միջին արժեքը կազմել է 24,3 (ստանդարտ շեղում՝ 5,8), ԴՊ ենթասանդղակի միջին արժեքը կազմել է 10,1 (ստանդարտ շեղում՝ 3,3), իսկ մասնագիտական արդյունավետությանը՝ 33,7 (ստանդարտ շեղում՝ 4,4):

Այսպիսով, տվյալ հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ՄԱ բարձր մակարդակ ունեին բժիշկների երկու երրորդը:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY